ՆՎԻՐԱԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «06» XI 2024թ.

Երևան համայնքը այսուհետ՝ «Նվիրաբերող», ի դեմս՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի մի կողմից, և Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքը այսուհետ՝ «Նվիրառու» ի դեմս Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով ու հիմք ընդունելով Երևանի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 15-ի հ. 215-Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Նվիրաբերողը պարտավորվում է Նվիրառուի սեփականությանն անհատույց հանձնել Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի «Քաղաքացիական պաշտպանության աջակցություն» ծրագրով ձեռք բերված 3,492,794 (երեք միլիոն չորս հարյուր ինսուներկու հազար յոթ հարյուր ինսունչորս) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 25 (քսանհինգ) էլեկտրաշչակները (այսուհետ՝ Գույք):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրաբերողը պատավոր է սույն պայմանագիրը ստորագրելուց հետո, 10 (տաս) օրվա ընթացքում Նվիրառուին հանձնել Գույքը: Գույքը հանձնվում է ՀՀ Տավուշի մարզի ք. Նոյեմբերյան Երևանյան 4 հասցեով:

2.2 Նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն փոխանցելը գրավոր հրաժարվել դրանից: Նվիրառուի հրաժարականի առկայության դեպքում նվիրաբերության պայմանագիրը համարվում է լուծարված:

2.3 Նվիրառուն պարտավոր է նվիրաբերության վերացման դեպքում վերադարձնել Նվիրաբերողի նվիրած Գույքը, եթե այն բնեղենով պահպանվել է նվիրաբերության վերացման պահին:

3. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

3.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն

պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մաս:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, կազմված է 2 (երկու) էջից երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի մեկ օրինակը տրվում է Նվիրառուին, երկու օրինակ Նվիրատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱՏՈՒ՝	ՆՎԻՐԱՌՈՒ՝
Երևան համայնք	Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնք
Հասցե՝ ՀՀ ք.Երևան Արգիշտի 1 ՀՎՀՀ՝ 02593108 ՀՀ ՖՆ ԳՎ ՀՀ՝ 900012410073	Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4 ՀՎՀՀ՝ 07625834 ՀՀ ՖՆ ԳՎ ՀՀ՝ 900395101612
Երևանի քաղաքապետ	Նոյեմբերյան խոշորացված համայնքի ղեկավար
Տիգրան Ավինյան	Արսեն Աղաբաբյան

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

Հիմք ընդունելով Երևանի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 15-ի հ. 215-Ա որոշումը, ներքոգրյալներս կազմեցինք սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Երևան համայնքը այսուհետ՝ «Հանձնող» Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի «Քաղաքացիական պաշտպանության աջակցություն» ծրագրով ձեռք բերված 3,492,794 (երեք միլիոն չորս հարյուր ինսուներկու հազար յոթ հարյուր ինսունչորս) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 25 (քսանհինգ) էլեկտրաշչակները հանձնեց Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքին, այսուհետ՝ «Ընդունող»:

Ակտի ստորագրման պահին հանձնվող գույքի վերաբերյալ Ընդունողը առարկություններ և դժգոհություններ չունի:

Սույն ակտը կազմված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Ակտի մեկ օրինակը տրվում է Նվիրառուին, երկու օրինակ Նվիրատուին:

Գույքը հանձնեց	Գույքը ընդունեց
Երևանի քաղաքապետ	Նոյեմբերյան խոշորացված համայնքի ղեկավար
_____ Տիգրան Ավինյան	_____ Արսեն Աղաբաբյան